

Պատրիարքութեան և փոխանորդութեան իւրոյ, և Աստուածատուր Հաստատեցաւ վերափին յառաջնորդութեան իւրում:

Իսկ Յակոբ Կաթողիկոս ելեալ յԵջմիածնէ՝ եհաս Իգմիւռնիա, և ընկալեալ գիր յորդորանաց յԱստուածատուր Պատրիարքէ՝ եկն յերուսաղէմ ընդ ուխտաւորս:

Գ Լ Ո Ի Խ Խ Ը .

Վերափն Հաստատութիւն Կաթողիկոսութեան և ինամակալութեան Եղիազար: Հակառակութիւնք Թլթլեանց: Ամբաստանութիւն Մարտիրոս վարդապետի զԵղիազարէ: անկոյ Եղիազարու զՊատրիարքութիւնն Երուսաղէմի: Գանկաք եւ ամբաստանութիւնք Ժողովոց ըդ Յակոբ Կաթողիկոսէն Եջմիածնի:

ԻՍԿ Եղիազար՝ որ կայր տակաւին յԱդրիանուպօլիս ՚ի դուռն Եսրաբքոսին, վարանէր ՚ի խորհուրդս իւր վասն Երուսաղէմի, զի մի ելցէ այն ՚ի ձեռաց իւրոց, մի՞ զի անդ կամէր նա Հաստատել զաթոռ Կաթողիկոսութեան, եւ երկրորդ՝ զի անդ ՚ի վասն Ս. Յակոբայ բազում ինչ ունէր նա պահեալ ՚ի թաքստի, և կասկածէր՝ թէ գուցէ անկցի ՚ի ձեռս Մարտիրոսի:

Սորհուրդ արար ապա ընդ Ապրո Չէլէպեայ՝ գտանել Հնարս վասն Երուսաղէմի: Իսկ երկցունք և վարդապետք և այլք ՚ի Հայոց՝ որք եկեալ էին ընդ նմա, Ժողովեցան անդ և ասեն, զի՞ եւս յընդունայն Հոգս դեգերիմք. եթէ այլք առին զԵրուսաղէմ յԵղիազարէ՝ իւրեանց լիցի այն. բաւական է այս՝ զի Եղիազար լիցի մեր Կաթողիկոս, և մեք փոյթ կալցուք՝ զի Հաստատեսցի իշխանութիւն Կաթողիկոսութեան նորա ՚ի Տէրութեան Օսմանցոց՝ և այն շատ է մեզ: Ասէ Եղիազար՝ ո՞ւր ապա Հաստատեսցի աթոռ Կաթողիկոսութեանս: Ետուն նմա պատասխանի, եթէ ասեն Հնար է՝ առցուք գոնէ այսչափ ինչ իշխանութիւն, զի դու առ այժմ կարգեսցիս ինամակալ եւ տեսուչ Երուսաղէմի, (իբր Նազր Միւթէվէլի) . եւ այսոս